ԴԱՍ 5. ԳԼՈՒԽ 2 — ՊԵՐԳԱՄՈՆԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Հայտնություն 2:12-17
Նամակ Պերգամոնի

Նոր կտակարանյան ժամանակաշրջան
New Testament Period

Պորգամոնը գտնվում էր Զմյուռնիայից 70 մղոն դեպի հյուսիս։

– Եփեսոսը՝ մեծ քաղաքական կենտրոն էր
– Զմյուռնիան առևտրի (կրոնական) մեծ կետնրոն էր
– Պերգամոնը՝ մեծ կրոնական կենտրոն։

12) Եվ գրիր **Պերգամոնում** գտնվող եկեղեցու հրեշտակին.

1. Պերգամոն՝ օձերի քաղաք – The City of the Serpent

Պեր=խառը, վիճաբանող (ապականություն, խառնակություն և այլն)
գամոս=ամուսնություն

2. Քրիստոսի տիտղոսը – Title of Christ

«Այսպես է ասում Նա, որ **սրած երկսայրի սուր** ունի»։

«Երկսայրի սուր» (Եբր. 4:12, Հայտն. 1)։ «Սրի իշխանությունը». բարձրագույն պետական իշխանություն. կյանքի և մահվան իշխանությունը։

3. Գովասանք – Commendation

13) Գիտեմ քո գործերը, և թե՝ որտեղ ես բնակվում, այսինքն՝ այնտեղ, որտեղ սատանայի աթոռն է, և ամուր պահում ես Իմ անունը, և չուրացար Իմ հավատը նույնիսկ այն օրերին, երբ Իմ **Անթիպաս** հավատարիմ վկան սպանվեց ձեր մեջ, որտեղ սատանան է բնակվում։

Անթիպաս՝ «Ընդդեմ բոլորի»։
Սիմեոն Մեթեֆաստեսը (Simeon Metaphrastes) մի լեգենդար պատմություն ունի, որ Անթիպասին, Դոմետիանոսի թագավորության

օրոք, փակել են շիկացած պղնձե ցլի մեջ, և նա կյանքն ավարտել է գոհանալով ու աղոթելով։ Հենգստենբերգերն (Hengstenberg) այս անունը դարձնում է խորհրդանշական և վերագրում Քրիստոսին, որպես Մեկը, ով «ընդդեմ է բոլորինշ Քրիստոսի համար»։

Սատանան իրական է

Իր էությամբ. In Character:

մարդասպան (Հովհ. 8:44), խաբեբա (Հայտն. 12:9, Բ Կորն. 11:3), ստախոս (Հովհ. 8:44), մեղավոր (Ա Հովհ. 3:8)։

Տիրույթը. Domain:

դիվային մեծ թագավորություն (Մաթ. 25:41, Հայտ. 12:7), աշխարհի համակարգը (Ա Հովհ. 5:19), սահմանափակ է, ամենագո չէ։

Սատանայի անունները՝

«թշնամի, հակառակորդ» Ա Տիմ. 5:14, Ա Պետ. 5:8
«եղբայրներին զրպարտող» Հայտն. 12:10
«այս աշխարհի աստվածը» Բ Կորն. 4:4
«օդի իշխանության իշխան» Եփ. 2:2
«այն ոգին, որ հիմա ներգործում է անհնազանդության որդիների մեջ» Եփ. 2:2
«թշնամի, որ որոմ ցանեց» Մաթ. 13:39
«չար» 6 անգամ

4. Անհանգստություն – Concern

14) Բայց քո դեմ որոշ բան ունեմ, որ այդտեղ դու **Բաղաամի** վարդապետությանը հետևողներ ունես, որ Բաղակին սովորեցրեց Իսրայելի որդիների առջև գայթակղություն դնել, որպեսզի նրանք կուռքերին զոհ արված բաներ ուտեն ու պոռնկանան։
15) Նույնպես դու **նիկողայոսյան** վարդապետությանը հետևողներ ունես, որ Ես ատում եմ։

Բաղաամ մարգարեն

Բաղաամ. Թվ. 22 և 23։ «Բաղաամի խորհուրդը», Թվ. 31:16

Բաղաամը հեթանոս «հարցուկ» էր (Հեսու 13:22)

- Հեսու 13:22 - 22 Եւ Բէովրեան Բաղաամ հարցուկին էլ Իսրայէլի որդիները սրով մեռցրին նորանց սպանուածների հետ։
- Միջագետքից (Բ Օր. 23:4,5) Եփրատի մոտից, Արամից (Թվ. 22:5, 23:7), ում վարձել էր Բաղակը՝ **Մովաբի** թագավորը։
- Բաղաամը հանդիմանվեց իր էշի կողմից (Թվ. 22) և հրաժարվեց անիծել Իսրայելին (Թվ. 23, 24), սակայն սովորեցրեց, թե ինչպես հաղթեն Իսրայելին (Թվ. 31:16)։

- «**Բաղաամի վարդապետություն**» Հայտն. 2:14
  - Հոգևորապես անսուրբ. ամուսնություն աշխարհի հետ
  - Ուշադրություն դարձրեք նաև. Նիկողայոսյանները վարդապետություն էին։ Համեմատիր.
- **Բաղաամի ճանապարհը**» Բ Պետ. 2:15
  - Վարձու = առևտրի առարկա դարձնել սեփական պարգևը

2 Պետ. 2:15-17 - 15 Որ շիտակ ճանապարհը թողած մոլորուեցան, Բէովրեան Բաղաամի ճանապարհին հետեւելով, որ անիրաւութեան վարձքը սիրեց. 16 Որ իր անօրէնութեան յանդիմանութիւնն ստացաւ. Անխօս էշը մարդի ձայնով խօսելով՝ արգիլեց մարգարէի հիմարութիւնը։ 17 Սորանք անջուր աղբիւրներ են, մրրկից քշուած ամպեր, որոնց համար խավարի մթութիւնը պահուած է հավիտեան։

Թվ. 22:7 - 7 Եւ Մովաբի ծերերն եւ Մադիամի ծերերը գնացին՝ իրանց **հմայութեան վարձքերն** իրանց ձեռքերին, եւ եկան Բաղաամի մօտ ու բաղակի խօսքերն ասեցին նորան։

- «**Բաղաամի սխալը**» Հուդա 11
  - Զոհաբերել հավիտենական հարստությունները ժամանակավոր շահի համար

Յուդա 1:11 - 11 Վա՜յ նորանց, որ Կայէնի ճանապարհով գնացին, եւ Բաղաամի մոլորութիւնովը վարձքին նուիրուեցան, եւ Կորխի հակառակութեան պէս կորան։

Նիկողայոսյաններ

Վաղ եկեղեցում ցանված «որոմներ»՝ օրինապաշտություն (Քրիստոսի կատարած գործի կատարելության հերքում), Գնոստիցիզմ (Քրիստոսի մարդեղության հերքում) և կայսրի երկրպագություն (Քրիստոսի Տեր լինելու փաստի հերքում)։

5. Քաջալերանք – Exhortation

16) Ուստի ապաշխարիր՛ր, եթե ոչ՝ շուտով կգամ քեզ մոտ և Իմ բերանի սրով կպատերազմեմ նրանց դեմ։

Հայ. 19:15 - 15 Եւ նորա բերանիցը դուրս է գալիս սրած սուր, որ նորանով զարկէ ազգերին. եւ ինքը հովուում է նորանց երկաթէ գաւազանով.

6. Խոստում հաղթողներին – Promise to the Overcomer

17) Նա, ով ականջ ունի, թող լսի՛, թե ինչ է ասում Հոգին եկեղեցիներին. Ով **հաղթի**, նրան պահված **մանանայից** ուտել եմ տալու ու ճերմակ մի քար եմ տալու նրան, և այդ քարի վրա գրված է լինելու մի նոր անուն, որ ոչ մեկը չգիտի, բացի նրանից, ով ընդունում է այն։

Մանանա

- «Ի՞նչ է սա»
- Հավաքում էին ամեն օր. շաբաթը 6 օր (Ել. 16)
- Գեղարվեստորեն նկարագրված է. «երկնքի ցորեն», «հրեշտակների հաց» (Սաղմ. 78:24,25) և «երկնքի հաց» (Սաղմ. 105:40)
- «Ես եմ կյանքի հացը» (Հովհ. 6:26-58)։

Ո՞վ է «Հաղթողը»:

«Քանի որ ամէն ոք, որ Աստծուց է ծնուած, հաղթում է աշխարհին։ Եւ ա՛յս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատը։ 5 Եւ ո՞վ է, որ յաղթում է աշխարհին, եթէ ոչ նա, ով հաւատում է, որ Յիսուսն է Աստծու Որդին։»։

Ա. Հովհ. 5:4,5։

7. Ավարտ – Close

Նա, ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին։

Խրատական մակարդակ (բոլոր եկեղեցիներին)
Admonitory Level (to all churches)

- ✓ Եփեսոս – Նվիրում, ոչ թե միայն վարդապետություն
- ✓ Զմյուռնիա – Տոկալ (դիմանալ) նեղություններին
- ✓ Պերգամոն – Մաքրեզերծել դեսպանության ծառայությունը

Անձնական կիրառություն (Հոմոլետիկա)
Personal Application (Homiletics)

- ✓ Եփեսոս – Անտեսված առաջնայնություններ
- ✓ Զմյուռնիա – Սատանայական ընդդիմություն
- ✓ Պերգամոն – Հոգևոր փոխզիջում

Խոստում հաղթողներին
Promise to the Overcomer

- ✓ Եփեսոս – Ուտել Կենաց ծառից
- ✓ Զմյուռնիա – Չվնասվել երկրորդ մահից
- ✓ Պերգամոն – Մանանա, քար, անուն

Մարգարեական պատկերը
Prophetic Profile

- ✓ Եփեսոսը ներկայացնում է Առաքելական Եկեղեցին։
- ✓ Զմյուռնիան ներկայացնում է հալածվող եկեղեցին։
- ✓ Պերգամոնը ներկայացնում է «ամուսնացած» եկեղեցին

Հաջորդ դասը

Կարդա 2-րդ և 3-րդ գլուխները։ Վերլուծիր Թիվատիրին ուղղած նամակը և կարդա Հայտնություն 2։18-29 (ամենաերկար նամակը)։

Ո՞վ էր Հեզաբելը։ Կարդա Գ Թագ. 21։